ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«27» հոկտեմբեր 2012թ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 160

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի N 6-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<Քաղաքաշինության մասին> ՀՀ օրենքի 10.1-րդ և 16-րդ հոդվածների և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի փետրվարի 20-ի <Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությանը քաղաքաշինության բնագավառում կառավարման պետական լիազորված մարմնի իրավասություն վերապահելու մասին> N156 որոշման համաձայն

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2005 թվականի հունվարի 18-ի <ՇՆՁ IV-12.101-04 <Գազաբաշխման համակարգերի նախագծում և շինարարություն> ձեռնարկը Հայաստանի Հանրապետության տարածքում կիրարկելու մասին> N 6-Ա հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները՝

հրամանով հավանության արժանացած <ՇՆՁ IV-12.101-04 <Գազաբաշխման համակարգերի նախագծում և շինարարություն> ձեռնարկի

1. 7.4.5 րդ կետի առաջին պարբերության առաջին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<7.4.5. Թույլատրվում է 150 ԿՎտ և ավելի գումարային ջերմային հզորություն ունեցող գազային ջեռուցման սարքավորումների տեղակայումը նախատեսել ՍՆիՊ II-35-76 <Կաթսայական կայանք> շինարարական նորմերի պահանջներին համապատասխան, իսկ մինչև 150 ԿՎտ հզորության դեպքում նաև շենքի ներսում գտնվող հնոցատանը (բացառությամբ նկուղային և ցոկոլային հարկերից),> :

2. 7.8.12-րդ կետի առաջին նախադասության <ոչ պակաս 1մմ հաստությամբ տանիքային կամ ցինկապատ> բառերը փոխարինել <ոչ պակաս 0,6 մմ հաստությամբ ցինկապատ> բառերով:

Նախարար Ս. Թադևոսյան

Իսկականի հետ ճիշտ է

«27» հոկտեմբեր 2012թ